տառապանս նոցա . և ըստ այսմ մնաց դրեցաւ հրովարտակն, և սակաւ ինչ ոգի առին Հայք, ١١٠٩ (1698)։

Արաքացի պատմիչ և բանաստեղծ ոմն յանուն Ապտէ-ւլ Ղանի Նապլուսի, ուղեւորեալ 'ի Դամասկոս, յԵգիպտոս և յԱրաբիա, և ապա 'ի թուին Հիճրէթի ١١٠٥ (1694) գայ հասանէ 'ի Յոպպէ քաղաք ծովեզերեայ, եւ իջեւանի 'ի վանս Հայոց, և գտանէ անդ ընդունելութիւն մեծ 'ի Տեսուչ վարդապետէն ինքն և ընկերք իւր, ապա գոհութեամբ նկարագրէ 'ի պատմութեան իւրում զհաստատուն շինուածս վանաց, իբրեւ բերդ ամուր ամրացեալ պարսպօք և աշտարակօք, և չտեսի ասէ զայլ ինչ 'ի Յոպպէ ամրագոյն քան զբերդն և զվանքն Հայոց։ Եւ եղեւ մեզ ասէ, և եղբարց մերոց, և որոց ընդ մեզ էին, կատարեալ ուրախութիւն և ցնծութիւն։ Եւ ապա գրէ ոտանաւոր քերդուածս 'ի վերայ Յոպպէ քաղաքի։

Իսկ Յովհաննէս Եպիսկոպոս կրեալ վիշտս եւ նեղութիւնս յօտարաց և ընտանեաց վախճանեցաւ (1697) եւ թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի։ Սա գնեաց յայլազգեաց ըզպարտէզն հանդէպ վանաց Ս. Հրեշտակապետի, և խառնեաց 'ի մեծ պարտէզն (1693)։ Եւ 'ի կենդանութեան իւրում կասկածեալ 'ի թշնամեաց իւրոց, էառ վերստին հրովարտակ սակս անկասկած վարելոյ զիշխանութիւն իւր, և անփոփոխ մնալ Պատրիարքաց Երուսաղէմի մինչ ցվախճան կենաց իւրեանց ١١٠٥ (1694)։ Եւ զկնի միոյ ամի 'ի գահակալութեան Սուլթան Ահմէտ երկրորդի, նորոգեաց զայն, սակայն ջանք նորին ոչ ինչ նպաստ եղեւ աթոռոյն, որպէս տեսցի յիւրում տեղւոջ։